ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 313-Ա/2 **«01» մարտի, 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ի N 1896-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (EXPERIMENTAL DEVELOPMENT PROJECTS) ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 21-ի N 2404-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի փետրվարի 24-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի N 1896-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում փորձարարական մշակումների նախագծերի (Experimental development projects) հայտերի մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Գիտական նախագծերի ֆինանսավորումը սկսել 2023 թվականի մարտ ամսից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«01» մարտի, 2023 թ.
N 313-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ի N 1896-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (EXPERIMENTAL DEVELOPMENT PROJECTS) ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Անվանում	Ղեկավար	Կազմակերպություն
1.	23EDP-1F009	MEFV ամբողջական գենում մուտացիաների նանոպորային սեքվենավորմամբ հայտնաբերման տեխնոլոգիայի մշակում	Առաքելյան Արսեն Արտաշեսի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
2.	23EDP-2I011	Ցելյուլոզ սինթեզող մանրէային շտամների սկրինինգ: Բակտերիալ ցելյուլոզի արտադրության տեխնոլոգիայի մշակում	Ավետիսյան Սոնա Ոսկանի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ» ՊՈԱԿ
3.	23EDP-4D003	Միջատասպան և պարարտացնող հատկություններով օժտված մանրէաբանական միջոցների մշակում գյուղատնտեսական բույսերի պաշտպանության համար	Գոգինյան Վիգեն Բորիսի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ» ՊՈԱԿ
4.	23EDP-2B001	Օդային պատկերների հավաքագրում և վերլուծություն անօդաչու թռչող սարքերի խմբերի միջոցով	Դարբինյան Արման Արայիկի	ՀՀ ԿԳՄՍՆ «Հայ-Ռուսական համալսարան» ԲՄԿՊՈՒՀ
5.	23EDP-1F004	Բազմաթիրախ դեղամիջոցների համակարգչային նախագծման տեխնոլոգիա	Զաքարյան Հովակիմ Սարգսի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
6.	23EDP-1F010	Առանձին բջիջների վերլուծության գործիքակազմ համակարգերի կենսաբանության համար. գործընթացներից մինչև հիվանդության թիրախներ	Ներսիսյան Լիլիթ Ռոբերտի	«Հայաստանի կենսաինֆորմատիկայի ինստիտուտ» գիտակրթական հիմնադրամ